**Երկրորդ ընթերցում**

***ՆԱԽԱԳԻԾ***

***Կ-801-29.05.2015-ՏՀ-010/2***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***ՀՈԴՎԱԾ 1.*** «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 31-ի ՀՕ-124-Ն օրենքի մաս կազմող՝ «2006-2007 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների» Ցանկ թիվ 1-ում՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարության ընկերությունների ցանկը 90054 ծածկագրի տողից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | |
|---|---|---|---|
| 21.2 | 90073 | «Հայփոստ» ՓԲԸ | քաղ. Երեւան, Սարյան 22 |

***ՀՈԴՎԱԾ 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

# Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված <<Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի կատարման 2014 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ արված առաջարկությունների ընդունելու կամ չընդունելու մասին**

| N | Առաջարկության հեղինակ/ներ/ը | Առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | ՀՀ ԱԺ պատգամավորներ **Նաիրա Զուհրաբյան** և **Միքայել Մելքումյան** | Առաջարկվում է ներկայացված ՀՀ օրենքի նախագիծը լրամշակել համապատասխան դրույթով, համաձայն որի «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մաս կազմող «2006-2007 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների» Ցանկ թիվ 1-ի 21.2-րդ տողով սահմանվող «Հայփոստ» ՓԲԸ-ի ***մասնավորեցման և մասնավորեցման նախապատրաստման գործընթացների*** իրականացման նպատակով ստեղծվում է համապատասխան հանձնաժողով ՀՀ ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: | Ներկայացված ՀՀ օրենքի ընդունումից հետո միայն <Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման/ մասին> ՀՀ օրենքի 24-րդ՝ <Պետական գույքի նախապատրաստումը մասնավորեցման>, հոդվածի համաձայն մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացման համար կարող է ստեղծվել հանձնաժողով, որի աշխատանքներին կարող են ընդգրկվել և մասնակցել նաև ՀՀ ԱԺ-ի տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ: |